



ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ ՀԱՆՈՒՆ ԲԱՑ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ

25-ը մարտի, 2011 թ.

Գործընկերության համառոտագիրը

Ի՞նչ է անհրաժեշտ զինված ուժերում բռնությանը վերջ տալու համար

Ջինվորական կառույցներն ի վիճակի՞ են ապահովել մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պահպանումը: Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների պաշտպանության մեխանիզմները բավարար են: Վերջին երկու տասնամյակների հողվածների հեղեղը, բազմաթիվ գիտական բանավեճերը և միջազգային մի քանի զեկույցները վկայում են զինված ուժերի բնագավառում մարդու իրավունքների վերաբերյալ ստանձնած հանձնառություններին հավատարի մնալու և զինված ուժերի նկատմամբ քաղաքացիական վերահսկողություն ապահովելու անհրաժեշտության գիտակցումը խորացնելու կարևորության մասին: Սառը պատերազմի ավարտից հետո, անվտանգության իրատեսական/նեոիրատեսական ընկալումը ոչ ճշգրիտ և միաչափ համարող «քննադատական» մոտեցումների ձևավորման արդյունքում լուրջ կասկածի տակ է առնվել ավանդական այն իրատեսական հիմնադրույթը, թե պետության միակ ազգային շահը գոյատևումն է: Վերջին երկու տասնամյակներում անվտանգության համապարփակ տեսլականի շրջանակներում ԵԱՀԿ-ի անդամ պետությունների համար սերտ փոխկապակցվածություն են ձեռք բերել անվտանգությանը և մարդու իրավունքներին առնչվող մտահոգությունները: Այնուհանդերձ, սառեցված հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում քանիցս խոչընդոտել է մարդու իրավունքների և անվտանգության միջև հավասար հարաբերությունների ձևավորումը և ուղի հարթել անվտանգությանն առնչվող մտահոգությունները գերակա ճանաչելու համար:

Վերջին տասնամյակում նոր թափ ձեռք բերած այս բանավեճում Հայաստանի կառավարությունը հիմնականում լռություն է պահպանել՝ նախընտրելով ընդհանուր օժանդակություն հայտնել ԵԱՀԿ-ի շրջանակներում անվտանգության համապարփակ հայեցակարգին՝ չստանձնելով, սակայն, կոնկրետ հանձնառություններ: Ավելի կարևոր է այն հանգամանքը, որ նշված ժամանակաշրջանում խարխուլվել են ռազմական կառույցները քաղաքականությունից տարանջատող սկզբունքները, և այսօր կառավարությունը հակված է անուշադրության մատնել այն միջոցառումները, որոնցով կարելի էր զգալիորեն բարելավել մարդու իրավունքների

իրավիճակի զինված ուժերում: Տարածաշրջանում պատրանքային կայունության երկու տասնամյակներից հետո Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների խնդրի վերաբերյալ բանավեճը չարաշահումների և անօրինական գործելակերպի վերաբերյալ շարունակաբար հնչեցվող ահազանգի ֆոնին թեժացել է: Նշված կենսական խնդիրները քննարկելու նպատակով «Գործընկերություն հանուն բաց հասարակության» նախաձեռնությունը, Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը («ԵԱՀԿ») և Եվրոպայի խորհուրդը կազմակերպել էին մասնագիտական քննարկում, որին մասնակցեցին Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի (ՊՆ) տեղակալ Արա Նազարյանը, Երևանում ԵԱՀԿ-ի գրասենյակի ղեկավար, դեսպան Սերգեյ Կապինոսը, ՊՆ-ի պաշտպանական քաղաքականության վարչության պետ Լևոն Այվազյանը, Բանակի և զինծառայողների խնդիրների գծով ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի խորհրդական Ռուստամ Մահմուդյանը, Հայաստանում Իռլանդիայի Հանրապետության պատվո հյուպատոս Ջոնաթան Սթարքը, Գերմանիայի բունդեսթագի զինված ուժերի գծով խորհրդարանական հանձնակատարի խորհրդական Լոթար Մյուլերը, ՊՆ-ի պաշտպանական քաղաքականության վարչության պետի տեղակալ Ալեքսանդր Ավետիսյանը և պաշտպանության նախարարին առընթեր հանրային խորհրդի նախագահ Գեղամ Հարությունյանը: Մասնակիցների թվում էին առաջատար փորձագետներ, այդ թվում՝ Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի վանաձորյան գրասենյակի համակարգող Արթուր Սաքունցը, Ջինված ուժերի նկատմամբ ժողովրդավարական վերահսկողության ժնկյան կենտրոնի պետի Նորանկախ պետություններում իրականացվող աշխատանքների գծով տեղակալ և Ասիայում աշխատանքային խմբի ղեկավար Իդեն Քոուլը և ԵԱՀԿ-ում մարդու իրավունքների հարցերով պատասխանատու Անդրեա Վեսան: Քննարկումը համակարգեցին Ազգային և ռազմավարական հետազոտությունների հայկական կենտրոնի տնօրեն Ռիչարդ Գիրագոսյանը, Երևանում ԵԱՀԿ-ի գրասենյակի ղեկավարի տեղակալ Կարել Հոֆստրան և «Համագործակցություն հանուն ժողովրդավարության կենտրոն» ՀԿ-ի նախագահ Ստեփան Դանիելյանը:

Տարբեր առումներով շեղվելով Հայաստանի զինված ուժերում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ տեղական և միջազգային զեկույցների եզրակացություններից՝ քննարկման մասնակիցները բազմիցս նշեցին, որ ճգնաժամը բանակում, ի տարբերություն քաղաքական այլ ոլորտների, վիթխարի ազդեցություն ունի՝ զոհերի թվի ավելացման առումով: Նախկինի պես առկա է ծայրահեղ անհամապատասխանություն մարդու իրավունքների բնագավառում Հայաստանի հանձնառությունների և դաժան վերաբերմունքի, բռնության, խոշտանգման և անօրինական այլ գործելակերպի իրողությունների միջև: Չնայած որ Հայաստանն իրավաբանորեն պարտավոր է կատարել մարդու իրավունքների վերաբերյալ հիմնական համաձայնագրերի, ինչպես նաև՝ տարածաշրջանային փաստաթղթերի, օրինակ՝ Անվտանգության քաղաքառազմական առանձնահատկությունների վերաբերյալ ԵԱՀԿ-ի վարքագծի կանոնագրքի նորմերը, որն անդամ պետություններից պահանջում է ռազմական, կիսառազմական և

անվտագության ոլորտում ծառայող աշխատողներին երաշխավորել հիմնարար ազատությունների իրականացման հնարավորությունը, մի շարք էական չարաշահումներ և մարդու իրավունքների խախտումներ կրկնվում են և մնում անպատիժ: Նման գործելակերպի յուրաքանչյուր դրսևորում նսեմացնում է բանակի նկատմամբ վստահությունը՝ հանգեցնելով զինված ուժերից հանրության օտարմանը: 2010 թվականին զինված ուժերում արձանագրելով մահվան ավելի քան 40 դեպք, տեղական իրավապաշտպան կազմակերպությունները կոչ են արել Հայաստանի իշխանություններին արդյունավետ միջոցներ ձեռնարկել անօրինական սպանության դեպքերը կանխելու և չարաշահումներ թույլ տվող զինծառայողներին պատասխանատվության ենթարկելու ուղղությամբ: Չնայած խորը ձգնաժամի առկայության մասին վկայող այդ նշաններին՝ պաշտպանության նախարարության ներկայացուցիչները դրական հայտարարություններ արեցին մարդու իրավունքների և զինված ուժերի անձնակազմում իրավունքների մասին իրազեկության բարձրացմանն ուղղված ջանքերի վերաբերյալ՝ բազմիցս ընդգծելով, թե չարաշահումների պրակտիկան բանակային մշակույթի մաս է դարձել, և թե խնդիրը լուծելու համար անհրաժեշտ է արժեհամակարգի փոփոխություն: Հիմնարար գործոնն այն է, սակայն, որ անհրաժեշտ է ավելի լավ հասկանալ զինված ուժերում ծառայողների իրավունքների պաշտպանության մեխանիզմները բարեփոխելու և առավել համարժեք դարձնելու ուղիները: Հաշվի առնելով այն փաստը, որ ներքին կարգապահության մասին օրենքի նոր նախագծում փորձ անգամ չի արվում հաղթահարել այսօր զինված ուժերում առկա տարաբնույթ մարտահրավերները, անուշադրության մատնելով հաշվետու գործելակերպի և քրեական պատասխանատվության խնդիրները, պարզ է դառնում, որ իշխանություններին անհրաժեշտ է մարդու իրավունքների ոլորտում ստանձնած հայտարարությունների մասին հռետորաբանությունը համապատասխանեցնել կոնկրետ առաջարկների և միջոցառումների հետ:

Այս բանավեճի կարևորագույն խնդիրներից մեկը վերաբերում է քաղաքացիական հասարակության ներգրավման տարբեր ռազմավարություններին, որոնց նպատակը քաղաքացիական կանոնակարգումը խթանելն է, ներառյալ՝ այդ ռազմավարությունների սահմանափակ հնարավորություններին: Հանրային խորհուրդը ստեղծվել է քաղաքացիական վերահսկողություն ապահովելու համար քաղաքացիական հասարակության և զինված ուժերի միջև վստահության կամուրջ կառուցելու նպատակով: Վերլուծելով ոլորտում առկա խնդիրները, քննարկման մասնակիցները կարևոր թերություններ բացահայտեցին «Ձինվորական ծառայության մասին» և «Տեղական ինքնակառավարման մասին» գործող օրենքների դրույթներում և համաձայնվեցին, որ համակարգում անհրաժեշտ է հաղթահարել մասշտաբի և միասնականության առումներով առկա լուրջ սահմանափակումները՝ ստեղծելով բանակում անօրինական գործելակերպի և չարաշահումների վերաբերյալ բողոքները քննող առանձին կառույց: Չնայած որ Հայաստանի կառավարությունում ըստ էության չկա միասնական կարծիք այն հարցում, թե երկարաժամկետ հատվածում բանակը վերահսկող որ կառույցը կարող է ավելի արդյունավետ լինել, փորձագետները համակարծիք էին, որ բանակի հրամանատարական շղթայից դուրս տեղակայված

զինվորական օմբուդսմանի գրասենյակ պետք է ստեղծել՝ ապահովելու Հայաստանի բարեհաջող ընթացքը դեպի ժողովրդավարացման և քաղաքացիական վերահսկողության հաջորդ աստիճանը: Քննարկման մասնակիցները ուշադրություն հրավիրեցին քաղաքացիական վերահսկողության մեկ այլ կարևոր հանգամանքի, այն է՝ կրոնական հիմքով զինվորական ծառայությունից հրաժարվելու իրավունքի իրացման նկատմամբ վերահսկողությանը: Մատնանշվեցին այլընտրանքային ոչ զինվորական ծառայության համակարգի մի շարք վիճահարույց դրույթներ, ներառյալ՝ ծառայության ոչ ողջամիտ տևողությունը: Ի գիտություն ընդունելով խղճի հիման վրա զինվորական ծառայությունից հրաժարվողների վերաբերյալ քաղաքացիական հասարակության մտահոգությունները, պաշտպանության նախարարության ներկայացուցիչները նշեցին, որ վճռական են համակարգը ներդաշնակեցնելու և բարեփոխելու հարցում:

Հայաստանին անհրաժեշտ է զինվորական ոլորտում գերակայություններ սահմանել՝ հիմնվելով մարդու իրավունքների վերաբերյալ երկրի միջազգային և տարածաշրջանային հանձնառությունների վրա: Քննարկմանը մասնակցող հարգարժան փորձագետները մանրակրկիտ և տարաբնույթ առաջարկություններ ներկայացրեցին քաղաքականություն մշակողներին, որոնք իրականացնելու արդյունքում կամրապնդվի վստահությունը բանակի և հասարակության միջև՝ միաժամանակ խթանելով բանակի համընդհանուր ինտեգրումը հասարակական կառույցներին:

Առաջարկություններ.

- Հրատապ կերպով ստեղծել զինված ուժերում մարդու իրավունքների խախտումները քննող անկողմնակալ, անկախ և թափանցիկ գործընթաց, և արդարադատություն իրականացնել անօրինական գործողությունների բոլոր մասնակիցների նկատմամբ:
- Օրենսդրական փոփոխություններ կատարել «Զինվորական ծառայության մասին» օրենքում և նախատեսել մարդու իրավունքների խախտումների համար հրամանատարների պատասխանատվությունը և անհատի պատասխանատվությունն ամրագրող իրավական դրույթներ:
- Ընդունել կանոնակարգերը և կարգապահական նորմերը խախտելու նկատմամբ «գրոյական հանդուրժողականության» քաղաքականություն, որը կնպաստի պատիժների և պատժամիջոցների արդյունավետ համակարգի ձևավորմանը:
- Իրազեկությունը բարձրացնելու և արհեստավարժ բանակի մշակույթը խթանելու նպատակով զինվորական ընդհանուր կրթության մեջ ներառել մարդու իրավունքների համապատասխան դասընթաց:
- Պաշտպանության նախարարության համակարգից դուրս ստեղծել զինված ուժերի քաղաքացիական մոնիտորինգի անկախ խումբ՝ ձևավորելով իրավական դաշտ, որը խմբին հնարավորություն կընձեռի

իրականացնել անկողմնակալ, հրապարակային և տեղեկատվությամբ հարուստ վերլուծություններ:

- Ստեղծել խոշտանգումների կանխարգելման կոնվենցիայի կամընտիր արձանագրության («OPCAT») կանխարգելման ազգային մեխանիզմ զինված ուժերի բնագավառում և երաշխավորել զորանոցներ կանոնավոր այցերի համակարգ, որի միջոցով անկախ և անկողմնակալ փորձագետները կհամոզվեն, որ տեղի չեն ունենում խոշտանգման և դաժան վերաբերմունքի դրսևորումներ, և որ զինված ուժերում ծառայողների նկատմամբ առկա է լավ վերաբերմունք: